09.12.26 - 09.12.26
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան, 503 ընթերցասրահ

Ս.թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում տեղի կունենա «Հաշվարկային նյութագիտությունը և դրա հնարավորությունները երիտասարդ հետազոտողների համար» խորագրով փոդքասթ-միջոցառումը:

Միջոցառման շրջանակում կկազմակերպվի Ֆիզիկայի ինստիտուտի ՈՒԳԸ կողմից իրականացվող փոդքասթների շարքի հերթական թողարկման նկարահանումը, որի հյուրն է ԵՊՀ հաշվարկային նյութագիտության լաբորատորիայի ղեկավար, **ֆ.մ.գ.թ. Հայկ Զաքարյանը:**

Զրույցի ընթացքում կներկայացվի Հ. Զաքարյանի գիտական ուղին, կքննարկվեն հաշվարկային նյութագիտության հիմնական գաղափարներն ու ֆիզիկայի և նյութագիտության փոխկապակցվածությունը:

Թողարկումը նախատեսված է ուսանողների, երիտասարդ հետազոտողների և ֆիզիկայով, նյութագիտությամբ, ինչպես նաև գիտության ժամանակակից, միջգիտակարգային ուղղություններով հետաքրքրվող անձանց համար:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am